

ՆԻԷՐ • ՆԱԽԱԿԻ • ՀԵՂԻՆԱԿ Լ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻՆ

Ձ. ԲԱԼՈՒՂԵԱՆԻՑ

Արդեօք եղե՛լ ես անքուն գիշերով
Միայնակ պառկած մի կոշտ անկողնում...
Պատահե՛լ է քեզ գաղտնի ցաւերով
Տառապած փակել խաւար սենեակում:
Գուցէ սլատահած լինի, որ արթուն
Նըստես սեղանիդ առաջ տաղտկութեամբ,
Սեղմես ճակատդ տարածամ պահուն
Ափերիդ մէջը բոլոր զօրութեամբ:
Եղե՛լ է արդեօք, որ դու զառանցես,
Անէծքներ թափես դողդոջ շըրթունքից...
Քո ոչընչութիւնն բացորոշ տեսնես,
Չը գըտնես մի ելք այդ խոր անդընդից:
Եւ այդ ժամանակ փետե՛լ ես մազերդ,
Յուսահատ ջարդել փայտացած մատներդ,
Ճընշող ու խեղդող զգացմունքը կըրճքիդ,
Թունալից միտքը այրւող ուղեղիդ:
Գուցէ ցընցւել ես, ցատկել աթոռից,
Գըժւած վազվրզել անկիւնից անկիւն,
Կարծես, անլեզու, մուլթը խորշերից
Յուսալիս լինես միակ փրկութիւն:
Եւ այնտեղ, գըլխումդ արագ պըտտումով
Գործում է ուժգին, զարկւում ճակատիդ
Այն մըռայլ հարցը, մըռայլ գոյներով,
Իր սպանիչ թոյնը թափելով սըրտիդ:

« Ինչո՞ւ—կըրկնում ես անգիտակցաբար
 Խեղդւած մի ձայնով, դիմելով պատին.—
 « Ես այդպէս չէի վրճըռել, ախար,
 « Երբ զբօսնում էի ծովի ափերին:
 « Այնտեղ նըպատակ դըրեցի դիմել
 « Հեռւում երևող սքանչելի լոյսին,
 « Հոսանքի հետը անվեհեր կըռւել
 « Եւ հասնել անշուշտ տենչալի կէտին:
 « Բայց ինչո՞ւ յանկարծ դեռ ճամբի կիսում,
 « Անորոշ կանգնած, նայում եմ հեռւին...
 « Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ չեմ թիւփարում,
 « Որ հասնեմ շուտով ցանկալի ափին:
 « Հոսանքը կատղած խըփում է նաւիս...
 « Ունում է իմ դէմ, ըսպառնում ալիք...
 « Ծովը ահագին—փրուած առաջիս...
 « Իսկ ես միայնակ՝ մի մըրջիւն փոքրիկ...»